Համաձայնագիր N 1

2017 թվականի դեկտեմբերի 25-ին կնքված «Փորձաքննության ծառայությունների մատուցման» N «ՍԱՊԾ-18/03» ծածկագրով՝ շրջանակային համաձայնագրի

ք. Երևան «31» հուլիսի 2019թ.

ՀՀ կառավարության ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը, ի դեմս տեսչական մարմնի ղեկավար Գ. Ավետիսյանի, որը գործում է տեսչական մարմնի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, «Ստանդարտ դիալոգ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Արարատյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից և վարչապետի աշխատակազմն, ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ՝ վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչի պաշտոնակատար Վ. Պապիկյանի, (այսուհետ՝ Վճարող)՝ հիմք ընդունելով 2017թվականի դեկտեմբերի 25-ին կնքված «Փորձաքննության ծառայությունների մատուցման» N «ՍԱՊԾ-18/03» ծածկագրով՝ շրջանակային համաձայնագրի 7.2 կետը (այսուհետ՝ Պայմանագիր), և ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1730-Ն որոշման 2.1 կետի 5-րդ ենթակետը, եռակողմ համաձայնությամբ, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասը Վճարող կողմը պարտավորվում է Պայմանագրով սահմանված լաբորատոր փորձաքննությունների ծառայությունների դիմաց կատարել վճարումներ համաձայն Պատվիրատուի կողմից ներկայացված հայտերի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և տարածվում կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

2.2 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.3 Սույն համաձայնագրում չնշված կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

2.4 Սույն համաձայնագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ	ՎՃԱՐՈՂ
ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին ք.Երևան, Կոմիտաս 49/2 ՀՎՀՀ 00454227 ---------- (ստորագրություն) Կ.Տ.	«Ստանդարտ դիալոգ» ՍՊԸ ք. Երևան, Կոմիտասի 49/4 «Կոնվերսբանկ» ՓԲԸ Հ/Հ 19300990638200 ՀՎՀՀ 00099876 ---------- (ստորագրություն) Կ.Տ.	Վարչապետի աշխատակազմ ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 1 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900013000881 ՀՎՀՀ 02505554 ---------- (ստորագրություն) Կ.Տ.